

ՃԱՏՖԱՐԻ «ՊԵՏԵ Է ՎԵՐԳ ՏԱԼ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԱԲԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԲԱՅՆԵՐՈՒՆ»

Երեքշաբթի, 30 Յուլիս 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ ՄԱԿ-ի մեջ Սուրիոյ մնայուն բանագնաց դուկտ. Պաշար ալ ճաաֆարի Սուրիոյ շուրջ ՄԱԿ-ի գումարած առցանց ժողովին ընթացքին շեշտեց, որ բոլոր այն պետութիւնները, որոնք խոստացած են միջազգային օրէնքը յարգել եւ միջազգային ապահովութիւնն ու խաղաղութիւնը պահպանել, անհրաժեշտ է որ վերջ տան Սուրիոյ ժողովուրդին մարդկային իրավիճակը քաղաքականացնելու քայլերուն եւ անոր փոխարէն օգտակար դառնան բնակչութեան մարդկային օժանդակութիւններ տրամադրելու եւ տեղահանուածներուն տունդարձը ապահովելու եսկան ծրագիրներուն:



Ճաաֆարի յայտնեց, որ եթէ կարգ մը կողմեր կը փափաքին 1974-ին Թուրքիոյ Կիպրոսը գրաւելու փորձը Սուրիոյ մէջ ալ կրկնել, թող լաւ իմանան, որ Սուրիա թոյլ պիտի չտայ նման բռնարարքի, նոյնիսկ եթէ ՆԱՌՕ-ի բոլոր պետութիւնները աջակցին Էրտողանին: Գաաֆարի անհրաժեշտ համարեց ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին Սուրիոյ տագնապին արմատական լուծում գտնելը, որպէսզի կարելի ըլլայ երկրին ապահովութիւնն ու խաղաղութիւնը վերականգնել եւ վերջ տալ թուրք-ամերիկեան բռնատիրութեան:

Ճաաֆարի խօսքը ուղղելով ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի ՆԱՌՕ-ի ներկայացուցիչներուն ըսաւ. «Դուք միջազգային օրէնքին եւ ՄԱԿ-ի պայմանագիրին հաւատարիմ մնալու սկզբունքով կը գործեք, թէ՛ ԱՄՆ-ի, Թուրքիոյ եւ Իսրայէլի սուրիական հողատարածքներ գրաւելու նկրտումներուն կ'աջակցիք: ՄԱԿ-ի Սուրիոյ ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան պահպանման հետ առնչուող որոշումները կը յարգեք, թէ՛ Սուրիոյ խաղաղութիւնն ու ապահովութիւնը քայքայող որոշումները»: Ապա եզրափակելով հաստատեց, որ վերջին ժամանակաշրջանին պարզուեցաւ, որ արեւմտեան կարգ մը պետութիւններ յաւակնութիւնը ունեցան իրենք զիրենք մարդկայնութեան եւ բարոյականութեան խորհրդանիշն ու պաշտպանը համարելու, սակայն ձախողեցան իրենց առաջին իսկ քննութեան մէջ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ՇՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՒԱԺԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Տնօրինութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 28 Յուլիս 2020-ին Բերիոյ Հայոց



Թեմի Հայեպի ճեգիրի շրջանի, Լաթաքիոյ եւ Զեսապի բոլոր եկեղեցիներէն ներս, յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին Հայրապետական Մաղթանքի արարողակարգ կատարուեցաւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 25-ամեակին առիթով:



Մարինա Չիլմբոջեան-Պողիկեան
Շար. Էջ 12

ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՍՏԵՂԱՍԾ ԱՇԽԱՏԱՆԲԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 30 Յուլիս 2020-ին, Բարգաւաճ Հայաստան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն եւ Հայրենիք կուսակցութիւններու կողմէն ՀՀ գլխաւոր դատախազութիւն ներկայացուած է ընդհանուր առմամբ 9 էջերէ բաղկացած՝ ՀՀ Զրեական օրէնսգրքի 3 յօդուածներով սահմանուած յանցագործութիւններու մասին հաղորդում: Ըստ Էութեան, ներկայացուած հաղորդումը միտուած է



օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու, ինչպէս նաեւ բարձրաստիճան այլ պաշտօնատար անձերու յանցակցութեամբ իրականացուած իշխանութեան իւրացման իրաւական գնահատական տալուն:

Սահմանադրական դատարանին եւ անոր անհատ դատաւորներուն դեմ նախաձեռնուած եւ դատական իշխանութիւնը գրաւելու միտող գործողութիւնները սկսած են եւ կը շարունակուին անելի քան մէկ տարիէ ի վեր՝ նպատակ ունենալով Սահմանադրական դատարանէն ներս ձեւաւորել կառավարելի մեծամասնութիւն: Այլ խօսքով՝ Սահմանադրութեամբ չնախատեսուած եղանակով Սահմանադրական դատարանի երեք դատաւորներուն լիազօրութիւնները դադարեցնելու եւ Սահմանադրական դատարանի նախագահին պաշտօնավարումէն զրկելու, ինչպէս նաեւ անոնց փոխա-

Շար. Էջ 3

ԿՈՉ

Կիրակի, 19 Յուլիս 2020-ին տեղի ունենալիք Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու թեկնածուներուն շուրջ հալէպահայ համայնքապետներու խորհրդակցութիւններուն արդիւնքով որդեգրուեցաւ խորհրդարանական ընտրութիւններու ազգի թեկնածուն՝ յանձին տիրար

Ժիրայր Ռեիսեանի,
որուն պիտի զօրակցինք միասնական ճիգերով, աշխոյժ մասնակցութիւն բերելով ընտրութեան աշխատանքներուն եւ անվարան ուղղուելով դէպի քուէատուփ:



Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տր. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան
Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Տր. Պետրոս Արք. Միրիաթեան
Սուրիոյ Հայ Անտարանական Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան

ՀԱՄԱԳՎԱՅԻՆ ԷԶ

ՀԱՄԱԳՎԱՅԻՆԸ՝ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՑԱԾ

Համագալինը, իբր պատնեշի վրայ պայքարող հայ մշակույթի պաշտպան, կը շարունակէ իր գործունեութիւնը, հակառակ տեղական ու միջազգային տագնապներուն, հաւատալով, որ մշակույթը միակ միջոցն է ապահովելու ապագայ սերունդներու հոգեմտաւոր կայունութիւնն ու հայկական դիմագիծի պահպանումը: Նախորդ ամսուան ընթացքին, պսակածէ ժահրի տարածման կանխարգիլման շրջագիծէն ներս, կարգ մը արգելքներու վերացումով միութիւնը վերագտաւ իր աշխուժութիւնը եւ կեանքի կոչեց պսակածէ ժահրին պատճառով կիսատ մնացած ծրագիրները:

Շրջանային Վարչութիւն

Հակառակ տիրող կացութեան, Համագալինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը չդադրեցուց իր աշխատանքները եւ պսակածէ ժահրէն կանխարգիլման շրջանին հետամուտ եղաւ բոլոր վարչութիւններու գործունեութեան շարունակութեան, նոր պայմաններուն համակերպելով:



Ուրբաթ, 29 Մայիսին Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակի տօնախմբութիւն, որուն յայտագիրը իրականացաւ զուտ համագալնական ուժերով, Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ:

ՄԱՍՆԱԳԻՐԵՐ

«Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղ, Հալէպ

Մասնաճիւղի երաժշտական յանձնախումբը նախորդին սկսած էր աշուղական երեկոյի նախապատրաստական աշխատանքները, որոնք այս ամսուան ընթացքին վերաշխուժացան եւ յառաջիկայ շաբաթներուն ելոյթը բեմ պիտի բարձրանայ: Տիկնանց յանձնախումբի նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ չիրի եւ հայկական քաղցրաւենիքներու դասընթացը:

«Վահան Նաւասարդեան» մասնաճիւղ, Լաթաքիա

Մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպած է գծագրութեան դասընթացը, արուեստագետ Մարիամ Ազարի ղեկավարութեամբ, 29 Յունիսէն սկսեալ, ինչպէս նաեւ մանուկներու ընթերցանութեան նախաձեռնութիւն: Մանուկներուն բաժնուած էին պատմութեան գրիքեր, իսկ անոնք իրենց ընթերցանութեան տեսերիզը գետեղեցին դիմատետրի վրայ: Մասնաճիւղի վարչութիւնը նաեւ ունեցաւ հարցազրոյց մը, տեղւոյն հոգեւոր հովիւ արժ. Տ. Վազգէն Զիւլի. Զեօշկերեանին հետ: Հարցազրոյցին տեսերիզը գետեղուած է մասնաճիւղի դիմատետրի էջին վրայ:



«Համօ Օհանջանեան» մասնաճիւղ, Բեսապ

Մասնաճիւղի վարչութիւնը 24 Յունիսին մասնակցութիւն բերաւ տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցին կազմակերպած «Միասին Խաղանք» ձեռնարկին, մանուկներուն ծանօթացնելով հայ մշակույթը ու միութեանս դերակատարութիւնը անոր պահպանման ու արգացման մէջ:



«Լեւոն Շանթ» մասնաճիւղ, Դամասկոս

Մասնաճիւղը անցնող ամսուան ընթացքին կեանքի կոչեց մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ խմբավար, վաստակաւոր երաժիշտ Լեւոն Ապաճեանի: Վարչութիւնը նաեւ նախապատրաստական աշխատանք կը տանի զանազան ձեռնարկներու:

«Աւետիս Ահարոնեան» մասնաճիւղ, Գամիշլի



Մասնաճիւղի վարչութիւնը նախաձեռնեց «Փարոս» ամառնային դպրոցի իրականացման, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն տեղւոյն 7-14 տարեկան հայ փոքրիկները: Վարչութիւնը նաեւ նախաձեռնած է Յովհաննէս Թումանեանի հեքիաթներու տեսերիզներ:

Թուրքիոյ նուրջ

Մաքրոն. «Թուրքիա Պատկան Եւ Բրեւան Պատասխանատուութիւն Կը Կրէ Լիպիոյ Գեղբերու Նկատմամբ»

RT լրատուամիջոցին համաձայն, Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոն սուր քննադատութիւն ուղղած է Թուրքիոյ՝ Լիպիոյ մէջ իր վարած քաղաքականութեան համար:



Մաքրոն Երկուշաբթի օր Գերմանիոյ Մեսսըրկքաղաքին մէջ երկրի վարչապետ Անկէլա Մերքըլի հետ մամլոյ միատեղ ասուլիսի մը ընթացքին շեշտած է, որ Թուրքիա լիպիական հակամարտութեան հրահրման՝ «պատմական եւ քրեական պատասխանատուութիւնը կը կրէ», ապա անցնուցած է. «Այս փուլին մեզի խիստ անհրաժեշտ է Լիպիոյ մէջ թրքական քաղաքականութեան յստակացումը, քաղաքականութիւն մը, որ մերժելի է մեզի համար»:

Մաքրոն բնութագրելով Թուրքիոյ Լիպիա ներխուժումը յայտնած է, որ ան առաջին արտաքին կողմն էր, որ միջամտութիւն կատարեց Լիպիոյ հարցին, ապա մեղադրած է Անգարան Պերլինի խորհրդածողովին ստանձնած իր պարտաւորութիւնները չկատարելու եւ Լիպիոյ մէջ իր գիւնտորական ներկայութիւնը ծաւալելու, ինչպէս նաեւ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ Սուրիայէն Լիպիա դրկելու յանցանքներով:

Մաքրոն եզրափակելով ըսած է. «Այս ոտնձգութիւնները ինքզինք ՆԱԹՕ-ի անդամ հռչակող Թուրքիոյ պատմական եւ քրեական պատասխանատուութիւնը կը համարուին եւ Թուրքիան ինք պիտի կրէ ապօրինի իր քայլերուն հետեւանքները»:

Անդրադառնալով Լիպիոյ հարցին, Մաքրոն շեշտած է, որ Ֆրանսա կողմ է տագնապի խաղաղ կարգաւորման:

Թրքական Ուժեր Կը Հրկիշեն Հասիճէի Գիւղական Երջանի Զարիւրի ԿԱՅԱՆԻ ՄԸ ՄՕՏ ՉՏՆՈՒՈՂ ԳԻՒԱՏՆԵՏՄԱԿԱՆ ՂԱՇՏԵՐԸ

Կիրակի, 28 Յունիսին սուրիական տարածքներ ներխուժած թրքական ուժեր հրկիզեցին Հասիճէի հիւսիսարեւելեան գիւղերու «Սաաիտա» քարիւղի կայանին շրջակայքը



գտնուող գիւղատնտեսական դաշտեր, որոնք գրաւուած էին քրտական եւ ամերիկեան ուժերու կողմէ:

«Այ Ռաթան» թրքակիցը յայտնեց, որ թրքական ուժեր կրակի տուին սահմանամերձ Զաիթաիէ գիւղերու գիւղատնտեսական դաշտերը, որուն հետեւանքով քարիւղի երկու անապատներ եւ հրկիզուեցան:

Բնակիչներն ու հրշէջ կամաւորները յաջողեցան շիջանել հրդեհը նախքան անոր քարիւղի կայաններ հասնիլը: Հրդեհին հետեւանքով, սակայն, ոչնչացան շրջանի գիւղատնտեսական տասնեակ դաշտերն ու անոնց հասած բերքը:

րու պատրաստութեան, դիմատետրի միջոցաւ զանոնք սփռելու:

ՄԻՎՈՐՆԵՐ Հայագիտական Հիմնարկ

Համագալինի Հալէպի Հայագիտական հիմնարկը, դիմագրաւելով ամէն դժուարութիւն, 13 Յունիսին անարտեց իր 24-րդ տարեշրջանը: Այս առթիւ միաւորի վարչութիւնը կազմակերպեց ուսուցիչներու եւ ուսանողութեան ընդհանուր հաւաք, որուն անդրադարձաւ հայ մամուլը՝ մանրամասնօրէն: Ամաւտեղի քննութիւնները ընթացքի մէջ են:



«Բարսեղ Կանաչեան» երաժշտական դպրոց

Ամսոյս ընթացքին երաժշտական դպրոցի վարչութիւնը նախաձեռնեց պսակածէ ժահրի կանխարգիլման շրջանին պատճառած բացթողումներու հատուցման դասապահերու:

Համագալինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Զարոզչական Կեդր. Յանձնախումբ

Աշակերտական Անկիւն

Բստիւթեան Խորհրդաւոր Յարստիւթեան Ծովը



Արգիս Արապանեան

Ծովը բնութեան ամենէն գեղեցիկ տարրերէն մէկն է: Ան կենդանի այլազան արարածներ ընդգրկող խորհրդաւոր աշխարհ մըն է:

Երբ ծովուն դիմաց կենաս, չես կրնար գապել հորիզոնին վրայ անոր վերջը գտնելու փնտռտուքը, բայց ան անծայրածիր է՝ սկիզբ ունի վերջ չունի, լեցուն է գաղտնիքներով եւ գարմանալի արարածներով:



Անոր ալիքները կրնան բարձրանալ երկար հանդարտութենէ ետք, իսկ փոթորիկէն ալեկոծուած խաղաղ ծովը կը փաստէ, որ կախարդական իր գեղեցկութեամբ անակնկալներ կրնայ պարգեւել մեզի:

Երբ ծովեզերքը նստած դիտենք մայրամուտին արտացոլումը ծովուն լայն մակերեսէն, մեր երեւակայութիւնը թռիչք կ'առնէ:

Ծովը վայելելու ամենէն հետաքրքրական բաժինը նաև նստիլն ու նաւարկելով խորանալն է, խորանալ ու ծուկերուն մերթ ընդ մերթ դուրս նետուիլը դիտելը:

Կարգ մը արուեստագետներ երբ ուզեն ստեղծագործել, ծովը կ'ըլլայ իրենց մոլիչ ուժն ու ներշնչումի աղբիւրը, ինչպէս կը տեսնենք Այվագովսկիի գեղանկարչութեան արուեստին մէջ: Ան ծովը գծած է իր հիանալի, բայց նաեւ տոսկալի ալեկոծումներով:

Որքան հաճելի է ծովուն մէջ լողալը, նոյնքան վախազդու ու վտանգաւոր է անոր ալիքներուն մէջ տատանիլը:

Ի՛նչ խորհրդաւոր է ծովը: Անոր մակերեսը հանդարտ է, սակայն խորքը՝ գաղտնիքներով լեցուն անհանդարտ աշխարհ մը:

Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարան
Ը. Կարգ

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

- Խմբագիր՝ Չարմիկ Զիլվերշեան-Պողիկեան
- Սրբագրիչներ՝ Չեփիւռ Պապիկեան-Աւագեան
- Յուշիկ Ղազարեան
- Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
- Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
- Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեան
- Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ՊՍԱԿԱԶԵՒ ԺՎՅՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԱՄԱՃԱՐԱԿ



Սարգիս Ագայան

Տեսաք չէ՞, որ անկարելի ոչինչ կայ աշխարհի վրայ: Առաջին օրերուն որքա՛ն մտահոգ էինք՝ մեկուսացած, առանձին, անձկութիւններու եւ տագնապներու մէջ կը տառապէինք: Ի՞նչ պատահեցաւ յետոյ: Մարդ արարածը բարեբախտաբար այս անել կացութեան ալ մասամբ լուծում մը գտաւ:

Եկէ՛ք, խոստովանինք: Երբեք այսքան սերտ յարաբերութիւններ չէինք կազմած մեր ընտանիքներով կամ ընկերներով: Փորձեցինք այս

խարհի ստեղծագործ եակի ձայնին, որ մինչեւ այսօր թէեւ հոն էր, սակայն երբեք չէր արժանացած մեր ուշադրութեան: Աւելին՝ մեր ընկերներու ներսիդի ձայներն ալ մեզի լսելի դարձան ու միասին ստեղծագործելու նոր առիթներ ծնան:

Այստեղ առիթներուն հետեւանալով՝ նոր աշխուժութիւն մը ապրեցաւ նաեւ մեր մայրենին: Սկսանք գիտակցիլ, որ այդ ներքին ձայնը մեր մայրենիին դարաւոր աղաղակն էր: Բազում արհաւիրքներու, հալածանքներու եւ




տագնապալի շրջանի ընթացքին առողջ մնալ, թէ՛ մարմնապէս, թէ՛ հոգեպէս: Երբ անդրադարձանք, որ հոգեպէս առողջ մնալու համար բազում միջոցներ ունինք ու կարելիութիւնները անսահման են, սկսանք մոռնալ ժահրի համաճարակը եւ նոր «համաճարակ» մը պաշարեց մեր առօրեան՝ ընկերային «համաճարակ»ը:

Կը յիշեք, չէ՞: Առաջին օրերուն կը հետեւէինք համացանցային բոլոր այն աղբիւրներուն, որոնք ցոյց կու տային պատկաճ ժահրի համաճարակին տարածումը, կամ կը լսէինք բժիշկներու գ ան ա գ ան առաջարկները, բացատրութիւնները եւ կը կիրարկէինք անոնց թելադրանքները: Յետոյ ի՞նչ պատահեցաւ: Մենք հետզհետէ դիմադրողականութիւն ձեռք բերինք այս

համաճարակներու դիմադրած մեր մայրենին, մեկուսացման այս օրերուն ապրելու կոչ ուղղեց բոլորիս եւ աշխարհի չորս ծագերէն հասաւ արձագանգը: Երիտասարդներ հայոց անխոնջ մայրենիին նոր արիւն ներարկեցին իրենց տարբեր ձեռնարկութիւններով:

Կեանքի անխիւ պտոյտին ճամբուն բազում քարեր կրնան յայտնուիլ ու խանգարել անոր ընթացքը: Այդ պտոյտին ընթացքին պատկաճ ժահրը եւ ընկերային «համաճարակ»ը դասեր էին մեր բոլորին համար: Նկատեցինք, որ միշտ պետք է ականջ տալ մեր ներքին ձայներուն: Մեր յաջողութիւններու, մեր հաւատալիքներու արժեքը այդ մակը քարերէն շատ անելի թանկագին է: Մեզի միայն կը մնայ այդ անխիւն ուժ



ճգնաժամային կացութեան: Վարակուողներուն քանակը եւ մահուան դեպքերը օրէ օր շատցան, իսկ մեր հետաքրքրութիւնը՝ նօսրացաւ, քանի որ կեանքի անխիւ կը շարունակէր դառնալ:

Այս իրարանցումին մէջ սկսաւ տարածուիլ նաեւ վերոյիշեալ այդ ընկերային «համաճարակ»ը: Բոլորս սկսանք ականջ տալ մեր ներաշ-

տալ եւ մեր ճանապարհը խանգարել փորձող այդ քարերը փշրելով անագի վերածել: Այս պայքարին ընթացքին նաեւ կրնայ պատահիլ, որ մեր անխիւները կոտորուին, բայց քանի դէռ դեկը մեր ձեռքն է, կրնանք սլանալ առանց անխիւներու, ինչպէս ընկերային «համաճարակ»ը, որ առանց անխիւներու եւ անտեսանելի ցանցով մը մեզ իրարու կը կապէ:

Ի՞նչ Կ'ըՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- Խոյ**
Շաբթուան առաջին կիսուն կարելոր է հանգստանալը, այլապես պիտի չլաշտողիք ճիշդ որոշումներ գոյացնել:
- Ցուլ**
Մեծածախս գնումներէն գերծ մնացէք, իսկ ամառնային ճամբորդութիւններու հաւանական ծախսերը լաւապես ուսումնասիրեցէք:
- Երկուորեակ**
Դուք դժուար կացութիւններէ դուրս գալու ձեռնարկ լաւապես տիրապետած էք: Օգտակար կրնաք դառնալ նման կացութիւններու մէջ յայտնուողներուն:
- Խեցգետին**
Յաջողութեան հասնելու համար վստահեցէք ձեր ուժերուն, յոյս մի՛ կապէք ուրիշներու օգնութեան, ոմանք կրնան վնաս հասցնել ձեզի օգտակար դառնալու փոխարէն:
- Առիծ**
Շաբթուան սկիզբը հետաքրքրականագաղափարներէն ծրագիրներ ի յայտ պիտի գան: Պիտի յաջողիք ամէն ջանք թափել կեանքի կոչելու գանձը:
- Կոյս**
Շաբթուան երկրորդ կեսը աւելի դժուար պիտի ընթանայ, թէ՛ զգացական ըլլաք ձեր դատումներուն մէջ:
- Կշիռք**
Տագնապալի շաբաթ մը պիտի ապրիք, սակայն շաբաթավերջին ձեր բոլոր հարցերը պիտի լուծուին եւ դուք պիտի քաղէք արդար աշխատանքին արդիւնքը:
- Կարիճ**
Հաւանաբար դրամական շահ ունենաք եւ անսպասելի նուէրներով վարձատրուիք ձեր գործատիրոջ կողմէ:
- Աղեղնաւոր**
Մտերիմներ պիտի փորձեն ուրախացնել ձեզ: Տեսիլները կազմակերպելով պիտի թթափեք ձեր յոգնութիւնը:
- Այծեղջիւր**
Ձեր ծառայողական աշխատանքներու շրջագիծին մէջ առողջապահական կամ պսակաձեւ ժախրէն կանխարգիլման նպատակով ձեռնարկներ պիտի կազմակերպեք եւ օգտակար դառնաք ձեր միջավայրին:
- Ձրիս**
Շաբթուան սկիզբը բաւական լարուած իրավիճակներու մէջ պիտի յայտնուիք, սակայն ճկունութիւն ցուցաբերելով պիտի կարենաք խուսափիլ վեճերու մէջ ներքաշուելէ:
- Ձուկ**
Մի՛ վարանիք ձեր սերը արտայայտելէ: Կեանքը կարճ է, իսկ սիրահարիլը՝ կեանքը համեմող, գայն գեղեցկացնող ու ձեզ աւելի բարի եւ երջանիկ դարձնող իրավիճակ:

Քսէմանկար



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

ԳԻՇԵՐԱՇՐՋՈՒԹԻՒՆԸ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՍՕՏ



Կարգ մը մանուկներ կը տառապին գիշերաշրջութենէ, այսինքն՝ կը խօսին, նոյնիսկ կը քալեն քունի ընթացքին: Արդեօք ասիկա օրկանակա՞ն հարց է, թէ հոգեկան, ժամանակաւոր է, թէ մշտական: Մասնագետ բժիշկներ կը հաստատեն, որ քունի ընթացքին քալելը ոչ մէկ կապ ունի երախայի հոգեկան խանգարումներուն հետ եւ մինչեւ օրս անոր տուն տուող պատճառները անորոշ կը մնան:

Գիշերաշրջութենէ կը տառապի 5-12 տարեկանի միջեւ երեխաներուն 15 առ հարիւրը: Ըստ կարգ մը սերտողութիւններու, երախային ընկերային միջավայրը կրնայ ազդեցութիւն ունենալ անոր քունին վրայ, օրինակ՝ աղմուկը, բարձր ձայները եւ երաժշտութիւնը երախային քունի ընթացքը կրնան խանգարել: Գոյութիւն ունի նաեւ ժառանգական գործօնը: Գիշերաշրջութենէ տառապող երախային ընտանեկան պարագաներուն մէջ ընդհանրապէս կը գտնուին նոյն այդ պարագայէն տառապողներ: Երբեմն, կարգ մը երեխաներուն մօտ, *մակնեզիումի* պակասը գիշերաշրջութեան պատճառ կը դառնայ: Սակայն չափաճանկները հազուադէպօրէն կը տառապին այս վիճակէն: Վերջին պարագային, գիշերաշրջութեան պատճառը կրնայ ըլլալ հանդարտեցուցիչ կամ այլ դեղերու գործածութիւնը կամ ոգելից խմիչք օգտագործելու մոլութիւնը: Գիշերաշրջութիւնը ի յայտ կու գայ ընդհանրապէս մանկութեան փուլի աւարտին ու պատանութեան փուլի սկիզբը եւ հազուադէպօրէն կը շարունակուի չափաճանկութեան տարիքին:



Քունը բաժնուած է փուլերու: Ան կը սկսի թեթեւ քունով, ապա՝ խորունկ եւ կը շարունակուի դանդաղ քունով: Իրաքանչիւր փուլի տեւողութիւնը 90 վայրկեան է: Երեխան կը քնանայ 7-8 ժամ, ուստի անոր դանդաղ քունի փուլը աւելի երկար է, քան չափահասինը: Հետեւաբար գիշերաշրջութիւնը ի յայտ կու գայ քունի առաջին քառորդին ընթացքին եւ քնալ չի պատահիր փոքրիկին արթննալու նախորդող, այսինքն՝ վերջին փուլին: Ծնողները պետք է գիտակցին, որ իրենց երախային կատարածը ակամայ վարուելակերպ մըն է, շատ կարելոր է հասկնողութեամբ վարուիլ այս ընթացքին եւ թմրեցուցիչ դեղեր խուսափիլ, կամ գանձը օգտագործել միայն բժիշկին թելորարանքով եւ այն ատեն, երբ պարագան իսկական վտանգ կը հանդիսանայ երախային կեանքին: Քունի ընթացքին քալելը կը բաժնուի երկու տեսակներու՝ դանդաղ քալել, որ չի վնասեր երախային եւ արագ քալել, որ կրնայ վտանգաւոր ըլլալ:

Ծնողները պետք է գիշերաշրջիկը արթնցնեն կամ որբէն հարցում ուղղեն անոր պատահածին մասին, այլապէս երախային մօտ կը յայտնուին շփոթի նշաններ: Ամէն պարագայի, գիշերաշրջութեան ընթացքին, ըլլայ ան դանդաղ կամ արագ, մայրը պետք է իր երախան վերադարձնէ անկողին, այնպէս մը որ ոչ մէկ բան պատահած ըլլար, որպէսզի երախան շարունակէ իր քունը:

Մասնագետ բժիշկներ կը շեշտեն, որ գիշերաշրջութիւնը սովորական երեւոյթ մըն է: Ծնողները պետք է գիտակցին այս մէկուն եւ շփոթի չմտնուին: Գիշերաշրջիկ երախաներուն 33 առ հարիւրին մօտ դեպքը կը պատահի ամիսը մէկ անգամ, իսկ մէկ անգամէ աւելի կը կրկնուի անոնցմէ 3 առ հարիւրին մօտ: Միայն յաճախակիօրէն կրկնող պարագաներուն է, որ բժիշկի միջամտութեան կարիք կ'ըլլայ, որովհետեւ այդ կրկնութիւնը կրնայ ազդել երախային ցերեկային գիտակցութեան եւ գործունէութեան վրայ: Ախտորոշումը կը պահանջէ բազմաթիւ ճշգրիտ հարցումներու պատասխաններ, օրինակ՝ երախան ո՞ր ժամուն կը քալէ, կը յիշէ՞ պատահածը, քալած պահուն ի՞նչ կը պատահի, ի՞նչ կ'ըլլայ անոր վիճակը քալելէն առաջ եւ ետք:

Մասնագետներ կը շեշտեն, որ գիշերաշրջիկ երեխան բուժելու համար դեղ պետք է գործածուի, բացի թէ ան սկսի քալած պահուն ինքնիրեն վնաս հասցնել եւ կամ թէ շաբթուան ընթացքին գիշերաշրջութիւնը կրկնուի մէկէ աւելի անգամներ: Այդ պարագաներուն ծնողները պետք է ձեռնարկեն պաշտպանողական քայլերու, որոնք ակնկալուող վնասներէն պիտի պաշտպանեն երախան գիշերաշրջութեան ընթացքին:

Գիշերաշրջիկ երեխայ ունենալու պարագային նախընտրելի է փակել տան բոլոր դռներն ու պատուհանները եւ հեռացնել այն առարկաները, որոնք կրնան վնասել երախային, ինչպէս օրինակ՝ դանակը, ասեղը, լուցկին եւ այլն: Պետք է հեռացնել նաեւ բոլոր այն կարասիները, որոնց երախան քալած պահուն կրնայ գարնուիլ ու իյնալ: Կարելի է նաեւ զանգակ մը գետեղել անոր սենեակի դրան վրայ: Ծնողքը կրնայ երեխան արթնցնել անոր քալելու ժամէն քառորդ ժամ առաջ, եթէ գիտէ, թէ ան գիշերուան ո՞ր ժամուն քալել կը սկսի: Ամէնէն կարելորդ պետք է երախան համոզել, որ պատահածը սովորական եւ ժամանակաւոր երեւոյթ մըն է:



Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՅԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականի նախկին խաղացող Մուսաֆ Ռամատանի որդին՝ Ամմար, Շաբաթ օր Զունգարիոյ ֆերինքֆարոս խումբին հետ տիրացաւ երկիրի ախոյեանութեան: Ամմար նախապէս Սուրիոյ ճապլէ խումբէն կը խաղար:



- Շաբաթ օր սկիզբ առաւ Սուրիոյ պասքէթի տղոց եւ աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքը: Մրցումները տեղի ունեցան առանց ժողովուրդի ներկայութեան, ինչպէս նաեւ յարգուեցան պսակածէ ժահրէն նախագգուշացման բոլոր պայմանները:

- Սուրիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն, Զալէպի մէջ Իթթիհատ 1-1 արդիւնքով հաւասարեցաւ Ռահտէին հետ: Աղիսակի առաջին դիրքը գրաւող Թիշրին նոյն արդիւնքով աւարտեց ճապլէի հետ իր մրցումը: Դամասկոսի ճէշը 2-1 արդիւնքով գիշեցաւ Զթթինին, իսկ Ֆթունէն 1-0 արդիւնքով յաղթեց Զարամէին: Շըրթա եւ Սահէլ խումբերուն հանդիպումը աւարտեցաւ 0-0 հաւասար արդիւնքով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Չաւի. «Ընտրութիւններէն ետք Կ' ուզեմ Մարգել Պարսելունան»

Սպանիոյ հաւաքականի եւ Պարսելունայի նախկին խաղացող Չաւի Զերնանտեզ, որ ներկայիս կը մարզէ Զաթարի Էլսատ ակումբը, վերջերս յայտնեց, որ քաթալոնական ակումբի ընտրութիւններէն ետք կ' ուզէ մարզել իր նախկին խումբը: Սպանական «Սփորթ» թերթին հետ զրոյցին ընթացքին ան ըսաւ. «Երազս է վերադառնալ նախկին ակումբս որպէս մարզիչ եւ անոր հետ տիրանալ գաւազան տիտղոսներու: Նախապէս ես պատրաստականութիւն չունեի այդ պաշտօնին կոչուելու, սակայն կը կարծեմ, որ Պարսելունայի նախագահական ընտրութիւններէն ետք ես կրնամ խոունքին մարզիչը դառնալ»:



պատրաստականութիւն չունեի այդ պաշտօնին կոչուելու, սակայն կը կարծեմ, որ Պարսելունայի նախագահական ընտրութիւններէն ետք ես կրնամ խոունքին մարզիչը դառնալ»:

ԼԻԿԸՐՓՈՒԼ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՅ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԻՐ ԵՐԱԶԸ

30 տարի յաղթական ամպիոններէ հեռու մնալէ ետք, Անգլիոյ Լիվըրփուլը նախքան տարեշրջանի աւարտը հռչակուեցաւ անգլիական «Փրեմիեր-լիկ»ի 2019/2020 տարեշրջանի ախոյեան:



«Փրեմիեր-լիկ»ի 31-րդ փուլին, Մանչեսթըր Սիթին յաղթանակը գիշեցաւ Չելսի խումբին, այնուհետեւ, կէտերու տարբերութեամբ, Լիվըրփուլ դարձաւ Անգլիոյ ախոյեան: Իւրկէն Կլոպի գլխաւորած խումբը մինչեւ օրս ունի 86 կէտ, 26 կէտերու տարբերութեամբ իրեն կը յաջորդէ Մանչեսթըր Սիթին: Աւելցնենք, որ Լիվըրփուլ վերջին անգամ Անգլիոյ ախոյեան դարձած էր 1989-1990 տարեշրջանին:

ԱԵՐԱՑ ԶԱՔԻՄԻՆ ՊԻՏԻ ԼԵՔ ՏՈՐԹՍՈՒՆՏԸ

Գերմանիոյ Պորուսիա Տորթմունտ ակումբի մարզական տնօրէն Մայքըլ Զորթ պաշտօնապէս յայտարարեց, որ խումբի մարտքի խաղացող

Աշրաֆ Զաքիմի պիտի հեռանայ դեղին խումբէն: Նախքան Տորթմունտ-Զոֆընհէյմ ակումբի հանդիպումը, Զորթ «Սքայ Նիւզ» թերթին յայտնեց, որ Ռէալ Մատրիտի խաղացող Զաքիմի, որ վարձա վճարով մաս կը կազմէ գերմանական խումբին, վերջին տասը օրերուն բանակցութիւններու մասնակցեցաւ: Ան աւելցնելով ըսաւ, որ Ռէալի իրաւունքն է վաճառել խաղացողը այլ ակումբի մը, եւ մենք պատրաստ ենք համագործակցելու այս հարցին առնչութեամբ: Յիշենք, որ մարտքի խաղացողին հետ բանակցութիւններ կը վարէ Իտալիոյ Ինթեր Միլանը:



ՍՊԱՆԻՈՒԼ ՊԱՇՏՈՆԱԿ ԸՐԱՒ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻՉԸ


Սպանիոյ Սպանիոլ ակումբը իր պաշտօնական կայքով յայտարարեց, որ վարչակազմը պաշտօնազուրկ ըրած է խումբի գլխաւոր մարզիչ Ալեքսարտո Ֆերնանտեզը, իսկ գայն ժամանակաւորապէս պիտի փոխարինէ խումբի մարզական տնօրէնը՝ Ռովելլին, մինչեւ նոր մարզիչի մը նշանակումը: Ակումբը յատուկ հաղորդագրութեամբ յայտնեց, որ մարզիչը պաշտօնազուրկ եղաւ խումբին անյաշող արդիւնքներուն հետեւանքով: Ան շնորհակալութիւն յայտնեց մարզիչին եւ անոր օգնականներուն, ինչպէս նաեւ յաջողութիւն մարտքէ բոլորին: Յիշենք, որ Սպանիոլ ակումբը 24 կէտով կը գրաւէ երկրի խումբերու աղիսակին վերջին դիրքը, արձանագրած ըլլալով միայն հինգ յաղթանակ: Տեղին է յիշել, որ Ֆերնանտեզը Սպանիոլի այս տարեշրջանի երրորդ մարզիչն էր:



Թիւ 14
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

	e	q	ո	p	թ	յ	ճ	յ
8		♖		♔		♚		
7	♖					♟		♗
6				♙	♘			♞
5					♔		♟	
4		♟						
3			♟				♙	♙
2		♙				♙		
1							♚	
	a	b	c	d	e	f	g	h

Նախորդ թիւի Պատասխանն է ♚xg7#
ՀԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՐԱԿԻ Յնձիւ.



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ...
Սկիզբ՝ էջ 1

Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց Հայկափ Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցուց Սուրբ Պատարագին և Հայրապետական Մաղթանքի արարողակարգը



կատարեց, ներկայութեամբ՝ Սուրբոյ Խորհրդարանի Երեսփոխան Ժիրայր Բէրեանի, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Յրաջ Յակոբեանի, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի, Ազգ. Վարչութեան, Կրօնական Ժողովի և ազգային մարմիններու անդամներուն, ազգային վարժարաններու տնօրէններուն և հաւատացեալ ժողովուրդին, որոնք



եկած էին ազգընտիր հովուապետին գահակալութեան 25-ամեակին առիթով իրենց երախտագիտութիւնը յայտնելու:


Պատարագիչն էր Արժ. Տ. Յուսիկ Ա. Զինյ. Սեդրակեան:

Հայրապետական մաղթանքի արարողակարգի ընթացքին ընթերցուեցան աւետարանական հատուածներ և աղօթքներ՝ Վեհափառ Հայրապետին ուղղուած քաջառողջութեան, աստուածահաճոյ ծառայութեան և արելշատ տարիներու բարի մաղթանքներուն կողմէն, ի պայծառութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին:

Առաջնորդ Սրբազան Հայրը պատգամը հիմնուած էր աւետարանական հետեւեալ համարին վրայ. «Եւ եւ՛ հովին քաջ. հովիւ քաջ գանձն իւր ղէ՛ է վերայ ոչխարաց»: Սրբազան Հայրը լուսարձակի տակ առաւ յատկանշիչները քաջ և վաւերական հովիւին՝ Քրիստոսին, որ երեք տարիներու ծառայութեամբ փնտռեց կորսուածները և Աստուծոյ առաջնորդեց գանոնք, փրկութեան և յաւիտենականութեան ճամբան բաւարար անոնց առջեւ:

Օրուան բարեպատեհ առիթը յիշատակելով սրբազան հայրը ըսաւ. «Այսօր Հայ եկեղեցին և

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը յիշատակեն իրենց Հայրապետին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կաթողիկոսական



ընտրութեան և օծման 25 տարիներու ամբողջական ծառայութիւնը: Այսօր Հայ եկեղեցին և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը բոլոր թեմերով և ժողովուրդով անգամ սը ևս կը յիշեն անկիւնադարձային

կարեւոր այն պահը և փուլը, երբ հայ ժողովուրդը ունեցաւ Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս առաքելներուն և Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայրապետին արժանընտիր յաջորդը, որ 25 տարի եղաւ օրինակ ամբողջութեան, ծառայութեան, խորագիտութեան, իմաստութեան, ամբողջական նուիրումի և անձնագոհութեան»:

Առաջնորդ Սրբազան Հայրը վեր առաւ վեհափառ հայրապետին հովուապետի, եպիսկոպոսապետի և



ազգապետի յանձնառու կեցուածքը, որուն շնորհիւ ան դարձաւ մեր եկեղեցուց, արդարութեան և պահանջատիրութեան ձայնը միջազգային

բեմերու վրայ:

Այս առիթով, սրբազան հայրը Թեմի ժողովականութեան և ժողովուրդին անունով շնորհաւորական խօսք ուղղեց սրբազանագոյն կաթողիկոսին, մաղթելով կատարեալ առողջութիւն ի մասնաւորի ներկայիս եկեղեցուց դիմագրուած դժուարութիւններուն դիմաց և աղօթք բարձրացնելով առ Աստուած մաղ-



թեց, որ ազգընտիր հովուապետին հայրապետական ցուպը առաւել ծաղկի և պայծառանայ՝ ի փառս



Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հայր, Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցուց «Ն. Աղբալեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Բերիոյ Հայոց Թեմի ազգային մարմիններու շնորհաւորական հաւաքը՝ վեհափառ հայրապետին գահակալութեան 25-ամեակին առիթով: Վերոյիշեալ ներկաներուն միացան նաեւ Թեմի եկեղեցիներու թաղականութիւնները, տիկնանց յանձնախում-

եամբ յիշեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին արժանիքները, անցնող 25 տարիներու հովուա-



պետական ծառայութիւնը, լուսարձակի տակ անցնելով Արամ Ա. Կաթողիկոսին յանդուզն կեցուածքը միջեկեղեցական և միջկրօնական համագումարներուն, ուր ան օրակարգի նիւթ կը դարձնէր արդարութեան հաստատումը, Հայոց Տեղասպանութեան ճանաչումը և հայ ժողովուրդի պահանջատիրութիւնը:

Սրբազան հայրը որդիաբար և Բերիոյ Հայոց Թեմի ազգային մար-

միններուն ու ժողովուրդին անունով շնորհաւորեց վեհափառ հայրապետին, կաթողիկոսական ընտրութեան և օծման 25-ամեակին առիթով, անոր մաղթելով քաջառողջութիւն, համբերութիւն և ընդ երկար գահակալութիւն:

Այնուհետեւ, Սուրբոյ Խորհրդարանի երեսփոխան և Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Ժիրայր Բէրեան խօսք անցնելով վեհափառ հայրապետին օտարներուն մօտ ձգած տպաւորութեան անդրադարձաւ, յայտնելով, որ Արամ Ա. Կաթողիկոսը բնորոշուած է իբրեւ իմաստուն ղեկավար հայ եկեղեցուց և հայ ազգի:

Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցուց Տիկնանց Յանձնախումբին կողմէ կոկիկ հիւրասիրութիւն մատուցուեցաւ:

Եկեղեցիներու դպրաց դասերը, դպրապետներուն առաջնորդութեամբ հրամցուցին «Ուրախ Լեր» շարականը, որմէ ետք ներկաները իրենց երախտագիտութիւնը արտայայտելով միասնաբար երգեցին Հայրապետական Մաղթերգը և «Կիլիկիա»-ն: Հաւաքը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազան Հայր «Պահպանիչ» աղօթքով:

Պահեա՛, ո՛վ Տեր, անսասան Չսուրբ Աթոռն Կիլիկեան. Կեցցե՛, կեցցե՛՛՛ առյաւելոն Տեր Տեր Արամ Հայրապետ: